

ԶՈՒԱՐՃԱՆԻՔ

Առաջին Կարգի Դրոշմ :

Ֆորսդեր Բոուլը անունով զարմանալի քաղող անգղիացին, ծնաւ 1700 թ. քաղքին մօտ Հորսֆորթ քաւանը՝ 1734 թ. աւանին . և 1763ին Լոնտոն գաւելով եկեղեցւոյ մը հոգաբարձուն յանձնեց զինքը : Հոն խել մը ատեն կենալէն վերջը՝ հօրեղբօրը քովը գնաց, ու երբոր հօրեղբայրն ալ մեռաւ, երկու երեւելի մարդիկներու պաշտօնին մէջ մտաւ, որոնք Լոնտոն կը բնակէին :

Յամին 1764 Ֆորսդեր Բոուլը խօսք տուաւ իր պաշտօնակիցներուն մէկուն որ ինքը 7 ժամուան մէջ 50 մլոն տեղ կրնայ կտրել քաղելով, և ըսածը կատարեց . սկզբան ժամուան մէջ տասը մլոն տեղ կ'ընէր, որ է վաղող ձիու ընթացք : Հաջած զգետը հարցնելու ըլլաւ, կռնակը լայնեկէ վերարկու մըն էր, ու մէջքէն վար կաշեայ վարտիքով սեղմուած էր :

Հասարակաց խօսք մի է թէ Ֆորսդեր Գաղղիայի ու Հելլենտիայի շատ կողմերը պարտած ու շատերէն գովիստ լսած ըլլայ : Իսկ 1773ին առջի անգամն էր որ դաշինք գնելով խոստացաւ Լոնտոնէն մինչև Եօրք քաղելով երթալու ու գառնալու : այս երկայն ճամբան 5 օրուան ու 18 ժամուան մէջ ըրաւ լմնցուց, որուն հեռաւորութիւնը 402 մլոն կը հաշուեն :

Կոյնպէս դաշինք դրաւ 1778ին ու 10 վայրկենի մէջ երկու մլոն տեղ վաղեց :

Անգամ մ'ալ Պաթի քաղքին մէջ հարիւր մլոն ճամբայ ըրաւ 24 ժամուան մէջ :— Կոյնպէս ուրիշ անգամ մ'ալ Քէնդրալլըրիէն մինչև Լոնտոն— Պրիժ ըսուած տեղը 24 ժամուան մէջ երթալու ու գառնալու համար խօսք տուեր է . առ տեղւոյն միջոցին հեռաւորութիւնը առջինէն 12 մլոն ալ աւելի է, որով տեսնողները շատ զարմացեր ու գովեր են :

Հետեւեալ տարին նորէն խօսք կու տայ Լոնտոնէն Էօրք երթալու ու գառնալու վեց օրուան մէջ . առ ճամբորդութենէն ետքը որ ըրեր է 1788ին, մինչև 1790 ալ ուրիշ ճամբորդութիւն չըրաւ : Բայց նոյն տարին գարձեալ խօսք տուաւ Լոնտոնէն Եօրք երթալու վեց օրուան մէջ, ու ինքը 5 օրուան ու 18 ժամուան մէջ կատարեց :

Իր կենաց վերջի տարիներն որ գրեթէ 58 տարուան էր՝ նորէն կրկնեց առջի ըրած ճամբան . և ասիկայ քան զառաջինը աւելի չուտ ըրաւ, այս ինքն 5 օրուան ու 15 ժամուան մէջ : Ի գարձին հանգիստականք կեցցէներով ու ծափահարութիւններով օգը կը թնկացնէին :— Կոյն տարին Քլափամ ճամբուն վրայ 58 վայրկենի մէջ 6 մլոն տեղ քաղեր է 20 կիկէ առնելու դաշինքով, որ գրեթէ 2,200 զուռէն աւելի է :

Քիչ մը ետքը ուրիշ տեղ մ'ալ 15 վայրկենի մէջ երկու մլոն տեղ երթալու յանձն կ'առնու, ան պայմանով որ մլոնին մէկը քաղելով երթայ, մեկը վաղեցով : Ուստի քաղելով 9 վայրկենի ու 20 մանրերկրորդի մէջ մէկ մլոն գնացեր է ու վաղեցով 5 վայրկենի ու 23 մանրերկրորդի մէջ մէկալ մլոնն ալ ընելով, 17 մանրերկրորդ իր խոստացածէն աւելի շահեր է :

Օր մը յանձն կ'առնու գէպ'ի Քէնդրալլըրի ճամբայ ընելու, բայց դժբաղդաբար երբոր Պլէքսիթի կը հասնի, ճամբան կը խոտորի գէպ'ի Լոնտոն, որով շատ կ'երկրնայ ու դրած դաշինքը կը տուժէ : Թէպէտ և այս սխալմունքը իրեն աւելի շահաւոր եղաւ . վասն զի բարեկամները ցաւելով իրեն առանկ ձախորդութեանը վրայ, իրենց ստորագրութիւններով անունը աւելի հաշակեցին :

Ֆորսդերը հարստութիւնը կ'առնէր . որչափ որ շատ կը վաստակէր՝ այնչափ ալ քիչ ծախք ունէր, ու գոհ կ'ըլլար և ուրիշներուն կ'օգնէր :

Մարմնով բարձրահասակ ու բարակ էր, հաստ կին երկայնութիւնը գրեթէ 5 ոտք և 9 բլծաչափի կը հասնէր : Մէջքէն վար մորմինը լաւ պրկած էր, որ քաղելու յարմար դայ . թէ և խառնուածքը մաղձային էր, բայց բնաւորութիւնը խիստ աշուշ և աղնիւ էր, և ուրիշ գովելի յատկութիւններ ալ ունէր : Ծանր և գծաւարամարս կերպ կրեղեններէ կը զգուշանար, նմանապէս ըմպելիքներէ, միայն ճամբայ ընելէն առաջ քիչ մը օղի կը խմէր : Իսկ գիշերը 5 ժամ միայն հանգիստ կ'առնուր :— Վերջի ըրած ճամբորդութիւնը իրեն շատ փառ տուաւ, ու 1793ին յանկարծ հիւանդաւ նալով՝ նոյն տարւոյն Ապրիլի 15ին մեռաւ, 59 տարուան, անպաճոյճ վիճակի մէջ . վասն զի իրեն անկարօտ վիճակին մէջ ալ աղքատութիւնը կը յարգէր և իրեն հաստատուն բարեկամը անուանած էր :— Ապրիլի 22ին ցորեկուրնէ վերջը մարմինը սուրբ Պօղոսի դաւիթը բերուեցաւ, ինչպէս որ ինքը խնդրեր էր մեռնելէն առաջ : Յուզարկաւորութեան հանգէսն ալ երկայն ճամբաներով կատարեցին : Շատ վայելուչ հանգիստով դամբանը կնքեցին և խել մը բազմութիւն թաղման հանգիսին եկեր էին :

Արեւմտեան :

ԳՈՐԾԱՌՈՐԻՆ մէկը կռնակին վրայ գերան մը առած երթալուն ատեն, ճամբան գիմարը նայելով՝ սաստիկ մը զարնուեցաւ Դիոգինէսին . ու նեղանալով մը պոռայ իրեն : Զգուշացիր :— Ի՞նչ, ըսաւ Դիոգինէս, մէյ մ'ալ կ'ուզես զարնել ինձի գերանը 33 :